ՊԱՇՏՈՆ	Մարքեթինգային տվյալների առաջատար վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	31/03/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	20/04/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ փնտրում է ակտիվ, փորձառու, մոտիվացված Մարքեթինգային տվյալների առաջատար վերլուծաբանի մարքեթինգային տվյալների վերլուծությունների իրականացման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրականացնել հաճախորդների վարքագծի վերաբերյալ տվյալների վերլուծություն, սեգմենտավորում և դրա հիման վրա ռազմավարական առաջխաղացման մշակում,
- Օգտագործել վիզուալիզացիայի գործիքները՝ վերլուծության արդյունքները ինտերակտիվ վիզուալների և գծապատկերների վերածելու համար,
- Բացահայտել և ուսումնասիրել միտումները, անոմալիաները և հնարավորությունները KPI-ի կատարողականը բարելավելու համար,
- Մշակել վերլուծական հաշվետվություններ, առաջարկել գաղափարներ՝ արշավների օպտիմալացման վերաբերյալ,
- Իրականացնել մեծ տվյալների բազայի վերլուծություն որի հիման վրա կստանանք տարբեր խմբերի օրինաչափություններ , փոփոխություններ,
- Իրականացնել միտումների վերլուծություն, կանխատեսում և կանխատեսող մոդելավորում՝ բացահայտելու բիզնես հնարավորությունները:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն վիճակագրության, կիրառական մաթեմատիկայի տնտեսագիտության կամ հարակից ոլորտներում,
- 2-3 տարվա աշխատանքային,
- SQL, Excel և Python գործիքներով աշխատելու փորձառություն,
- Տվյալների հաշվետվության հիման վրա լուծումների, նախագծման և ներդրման փորձ՝ Tableau, Power BI կամ այլ BI գործիքներով,
- Հայերեն , անգլերեն, ռուսերեն լեզուների գերազանց իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ,
- Հաղորդակցվելու և թիմում աշխատելու գերազանց հմտություններ,
- Գործընկերներ հետ արդյունավետ բանակցություններ վարելու հմտություններ,
- Բանակցելու և խնդիրներ լուծելու հմտություններ,
- Խիստ Deadline-ների հետ աշխատելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/131 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/